



Սիրելի բարեկամ,
25 Նոյեմբերի շրջանաւարտից հաւաքը 2019-էն ի վեր առաջին հրապարակային ձեռնարկն էր, որ տեղի կ'ունենար, առանց հաշուելու դպրոցական ընթացիկ գործունէութիւնները՝ ամառվերջի հանդէսներ եւ այլն:

100-ի հասնող ներկաներուն ժպիտներէն խանդավառութիւն կը ճառագայթէր, երբ միասնաբար կը լուսանկարուէին, կամ երբ յիշելով պատանութեան օրերը՝ պահ մը կը թախծէին, սակայն շուտով կ'երջանկանային:

Ներկայ շրջանաւարտներուն եւ նախկին սաներուն այս հոգեվիճակը (չմոռնանք տագնապները որ կը շարունակուին) յուշեց կարեւոր բան մը. յաճախ կը խօսինք ՀԱԳ-ի ջամբաժ որակաւոր ուսումին եւ կրթութեան մասին. իրաւամբ: Սակայն, այն մթնոլորտը որ կը տիրէր այդ երեկոյ, ի յայտ բերաւ մոռցուած, բայց կարեւոր յատկութիւն մը. ՀԱԳ նաեւ ԸՆԿԵՐԱՅԻՆ առողջ շրջապատ մըն է իր աշակերտներուն համար, ուր անոնք վիճելով ու սիրելով, խաղալով ու կողուրտելով, պասքէթով ու ակումբներով զարգացուցին բարեկամական մաքուր կապ մը: Դեռ կայ աւելին. օգտուելով դպրոցին առողջ միջավայրէն, իրենք իրենց հերթին նպաստեցին այդ մթնոլորտի յարատեւումին, որ հասած է օրերս:

Իսկապէս մեր 1624 շրջանաւարտները եւ հազարաւոր նախկին աշակերտները մեր մեծագոյն հարստութիւնն են: Ի զուր չէ, որ նախկին աշակերտ մը վկայեց, թէ ինք տարիներ ՀԱԳ յաճախած ըլլալով հանդերձ հոսկէ շրջանաւարտ չէ եղած, բայց ինքզինք միշտ «քաղաքցի» կը զգայ:

ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ

Գոհունակութեամբ կը յայտնենք, թէ դպրոցի բարերարներէն երկարամեայ նախկին աշակերտ տիար Հրաչ Սիսեռեան իր սիրեցեալ ծնողաց Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու բարի յիշատակին 2022-ի իր տարեկան յատկացումը՝ 12.000 կանխիկ տուար եւ 20.000 տուարի չէք, դպրոց անձամբ յանձնեց, ընկերակցութեամբ իր եղբոր՝ Արա Սիսեռեանի:

Հայ Աւետ. Գոլէճը բարձրօրէն կը գնահատէ մեծայարգ բարերարին շարունակական այս ազնիւ ժեստը եւ կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնը:

**5 ՓԵՏՐՈՒԱՐ 2023
ԳՈՇԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՇՏԱՍՈՒՆՔ**

**10 ՅՈՒՆԻՍ 2023
ՍՐԱԶԱՆ
ՀԱՄԵՐԳ**

**11 ՅՈՒՆԻՍ 2023
ՃԱՇԿԵՐՈՅԹ**

**3 ՅՈՒՆԻՍ 2023
ԳԻՐԷԻ
ՇՆՈՐՀԱՆԴԷՍ**

**ՀՈԿՏ. 2023
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ**

**ՆՈՅ. 2023
ԵՐԵՎԱՆ**

- ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՀԱՒԱՔ
- ԲԱԶՄԱԶԱՅՆ ԶՐՈՅՑ
- "ՀԱԳ Ո՞Վ ՈՎ Է"
- ՃԱՇԿԵՐՈՅԹ
- ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՀԱՒԱՔ
- ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՎԵՐԱՄՈՒՏ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ սկսաւ ՀԱԳ-ի հարիւրերորդ տարին՝ աշակերտութեան թիւի 10% յաւելումով:

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ դպրոց վերադարձան Մանկապարտեզի փոքրիկները:

9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ տեղի ունեցաւ աւանդական վերամուտի պաշտամունքը:



Լիրանանի մէջ Արիեստական բանականութեան ուսուցման առաջատար ընկերութիւններէն՝ Professional Learning Center-ին հետ 18 Յուլիս 2022-ին կնքուած փոխադարձ գործակցութեան համաձայնագիրին հիմամբ, ՀԱԳ-ի մէջ սկսան ԱՐՇԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ՝ առաջինէն 11-րդ դասարաններու համար, իբրեւ կրթական ծրագրի հիմնական մաս: Դասընթացքները կը վարէ դպրոցի բնագիտութեան ուսուցիչ եւ Գիտութեան բաժանմունքի համադրող արն. Նժդեհ Մխսեան (2011-ի շրջ.):



ՔՈՅՐ ԴՊՐՈՅ

Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման ուղղուած զուգընթաց քայլերու շնորհիւ Արցախի Մարտակերպ շրջանի Հաթերք գիւղի միջնակարգ դպրոցն ու Հայ Աւերարանական Գոլէճը ՔՈՅՐ ԴՊՐՈՅՆԵՐ դարձան: Այս յարաբերութիւնը փարուան ընթացքին պիտի դրսեւորուի զանազան բնոյթի ու ասպարէզներու մէջ գործակցութեամբ՝ յարկապէս աշակերտութեան միջեւ միասնական զանազան կրթական եւ ընկերային գործունէութիւններով:



Շաբաթ, 24 Սեպտեմբերին ՀԱԳ-ի ուսուցչակազմն ու պաշտօնէութիւնը ներկայ եղան օգտաշատ աշխատանիստի մը, որ վարեց Հայկազեան Համալսարանի դասախօս դոկտ. Քրիստին Արզումանեան-Ղազարեան: Դոկտ. Արզումանեան, որ նաեւ հիմնադիրն է Wellness at Work հաստատութեան, խօսեցաւ դպրոցէն ներս ու գործակիցներու հետ առողջ եւ ուրախ տրամադրութիւն ստեղծելու մասին, աշխատանքի արդիւնաւէտութիւնը եւ անկէ ստացուած գոհունակութիւնը բարձրացնելու համար:

ՀԱԳ-ի փնտրէնութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ դոկտ. Արզումանեանին, որ սիրով պատրաստեց եւ վարեց սոյն սեմինարը:

ԿԳՂՈՒՄԻ ՓՍԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2022 ամռան ընթացքին, ՀԱԳ-ի մեջ կատարուեցան հետեւեալ սորոգութիւնները.

Ա ■ Ջրամբարներու փոփոխութիւն եւ մաքրութիւն, ջուրի գտիչներու տեղադրում

Բ ■ Մերսիք փողոցին յարող արտաքին ճակատի սորոգութիւն, ջրամեկուսացում եւ ներկ

Գ ■ Բակի աստիճաններու հիմնական սորոգութիւն

Դ ■ Յանելի տարածքներու սորոգութիւն եւ սոր բոյսերու ցանք

Ե ■ Արտաքին եւ ներքին բակերու նստարաններու սորոգութիւն եւ բարեգարդում

Զ ■ Շրջափակի մուտքին եւ շէնքին վրայ լուսատախտակներու գետեղում





Որբաթ, 28 Հոկտեմբերին տեղի ունեցավ ՀԱԳ 3-րդ Աշակերտական խորհուրդի ընտրությունը: Գաղտնի քուէարկութեամբ երկրորդականի աշակերտները ընտրեցին ԵՌԻՄԷՅ ԵՌԻՆԵՍԻ (12-րդ) գլխավորած յանձնախումբը, իբրեւ աշակերտութեան ներկայացուցչական մարմինը յաջա տնօրէնութեան:

Նորընտիր վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.

- ԵՌԻՄԷՅ ԵՌԻՆԵՍ
- ՄՈՒՍԹԱՖԱ ՇԵՀԱՍԷ
- ՔԱՐԻՍ ԵՌԻՆԵՍ
- ՀՐԱԿ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ
- ՆԱՐԵԿ ՔԵՕՇԿԷՐԵԱՆ
- ՄԱՆԷ ԶՈՒԱԳԵԱՆ

ՍԵՐԼԻ ՀԱՍՏԱՏ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱԼՅԵՄԵՁԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ԿԻՒԼԵՔՃԵԱՆ
ՆԱՐՕՏ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
ՍԷԼԻՆ ԱՍՏՈՒՐԵԱՆ
Դպրոցի տնօրէնութիւնը ուրախ է, որ քառամեայ այս ամառայթը արդէն մաս կը կազմէ ՀԱԳ-ի սկզբունքներուն՝ աշակերտութիւնը մասնակից դարձնելու իրենց վերաբերող հարցերու քննարկման եւ որոշումներու յանգման:

• • •

Նախապէս աշակերտական խորհուրդը գլխավորած են ԱՅԳ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ (2019 - 2021), ԷԼԿԻՐԱ ԶԷՅԹՈՒՆՅԵԱՆ (2021- 2022):

10-րդ դասարանի աշակերտուհի ՍԵՐԼԻ-ՌՈՂՈՒ ՇԱԿԻՆԵԱՆ 2 Դեկտեմբեր 2022-ին շահեցավ Լիբանանի հայոց ազգային անաշնորդարանի անցեալ տարի կազմակերպած «Միեր Ջուլիածեան շարադրական մրցանք»-ի միջնակարգ բաժնի երրորդ մրցանակը:

Շնորհաւորութիւններ մեր շնորհալի աշակերտուհիին:




ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՊՏՈՅՏԸ

ՀԱԳ-ի Տիկնանց ընկերային յանձնախումբի կազմակերպութեամբ 29 Հոկտեմբեր 2022-ին տեղի ունեցավ շրջապտոյտ մը դէպի Պաթրոնի լեռնային շրջաններու հոգեւոր կեդրոններ՝ Էտտէի եւ Մայֆուքի մէջ, նաեւ Ասսիայի կաազործական կեդրոնը: Մէջընդմէջ բացատրութիւններ տուին տիկ. Մարալ Մխսեան եւ տիկ. Լիլա Արթինեան:

Հաւաքական ճաշկերոյթը տեղի ունեցավ Քասր էլ Նայիմ ճաշարանին մէջ:

Ձեռնարկը իր ներկայութեամբ քաջալերեց դպրոցի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարրլեան:



12-րդ դասարանի աշակերտ ՀՐԱԿ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ, 24 Յունիս 2022-ին Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ ձեռնադրուեցավ կիսասարկաւազ՝ ձեռամբ Շահէ արք. Փանոսեանի:

Համազգայինի Գուսան երգչախումբը 4 Դեկտեմբեր 2022-ին ելոյթ ունեցավ սուրբ ծննդեան երգերու համերգով: Երգչախումբին մաս կը կազմեն 12-րդ դասարանի աշակերտներ ՄԱՐԻ-ԼՈՒԻՁ ՊՈՅՏՈՒՇԱՔԵԱՆ եւ ՀՐԱԿ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ:



ԺՊՈՂՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՆԵՐ

Ուրբաթ, 25 Նոյեմբերի երեկոյան, հակառակ տեղատարափ եւ անդադրում անձրեւին ու «Սեւ ուրբաթ»-ի խճողումին, մեծաթի շրջանաւարտներ, նախկին աշակերտներ եւ ուսուցիչներ մէկտեղուեցան Առաջին եկեղեցւոյ սրահին մէջ, ծանօթանալու հարիւրամեակի ծրագիրներուն եւ ատլին՝ վերլիշելու իրենց դպրոցական օրերը, տեսակցելու դասընկերներու եւ ուսուցիչներու հետ:

Հանդիսութեան ելոյթ ունեցան տնօրէն դոկտ. Արմէն Իրնէշլեան, պատ. տնօրէն դոկտ. Զաւէն Մարլրեան, հոգաբարձութեան ատենապետ պրն. ներսէս Պաղտոյեան եւ հովի պատուելի Ժիրայր Ղազարեան: Շրջանաւարտներ հանդէս եկած շինիչ առաջարկներով:

Ճոխ հիւրասիրութեամբ մը շարունակուեցան զրոյցները մինչեւ ուշ ժամեր:



Սիրելի՛ բարեկամներ,
Եթէ 100-ամեակի մասին որեւէ առաջարկ կամ հարցում ունիք, կրնաք գրել aec100years@gmail.com հասցէին կամ՝ հեռաձայնել դպրոց:





Մախթարո Կարո Արեւեսը (1988-ի շրջ.) 6 Հոկտեմբեր 2022-ին Ռուսաստանի Փլեյսթրի քաղաքին մեջ ղեկավարած է տեղայն ֆիլիարմոնիք նուագախումբը կատարելով Արամ Խաչատուրեանի եւ այլ դասական յորինողներու գործերը:

Աւետան նախապէս՝ 31 Յուլիս 2022-ին, Ռուսաստանի Սիբիրու քաղաքին մեջ մասնակցած էր եռօրեայ երաժշտական փառատօնի մը քաղաքի ֆիլիարմոնիք նուագախումբը ղեկավարելով: Ծրագիրը կազմուած էր դասական արիաներէ եւ տօնական ստեղծագործութիւններէ: Իսկ 30 Յուլիս 2022-ին Երեւանի Կոմիտասի անուան պետական կամերային երաժշտութեան տան մեջ ան ղեկավարած էր Հայաստանի ազգային կամերային նուագախումբը դասական երաժշտական գործերու ներկայացումով:

22 Նոյեմբերին Աւետան ղեկավարեց Լիբանանի ֆիլիարմոնիք նուագախումբը Լիբանանի անկախութեան տօնակատարութեան ընթացքին՝ հովանաւորութեամբ վարչապետի յանձնակատար Նեժիպ Միքաթիի: Այդ առթիւ, Կարոյին շնորհուցաւ գնահատանքի յուշատախտակ Մշակոյթի նախարար Մուհամմատ Ուիսամ Մուրթատաի կողմէ, ներկայութեամբ Վարչապետի յանձնակատարին:

Օրդ. Շուհուր Քեօրեւս (2015-ի շրջ.) Նոյեմբեր 2022-ին Երեւանի մեջ կայացած համահայկական գագաթնաժողովին վարած է «Սփիւռքը կրթութեան եւ մշակոյթի ոլորտում» խորագրով նիստը, մասնակցութեամբ «Դասաւանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի, Ardean-ի, «Ճինիշեան» յիշատակի ձեռնարկի եւ COAF-ի դասախօսներուն: Շուշան Hub Artsakh կազմակերպութեան գործադիր տնօրէնն է:



Նախկին աշակերտուհի Արսիսէ Քեօրեւս (2010 - 2021) 30 Սեպտեմբեր 2022-ին Հոռմի մեջ շահած է «Հիփփօ, Անգլերէն առանց սահմանի 2022» ողիմպիականի իր տարիքի դասակարգի առաջնութիւնը եւ արժանացած է ոսկէ մետալի:



23 Հոկտեմբեր 2022-ին տեղի ունեցած Լիբանանի թեմի հայոց առաքելական համայնքի ազգային երեսփոխանական ժողովի ընտրութիւններուն, ժողովի անդամ ընտրուած է ՀԱԳ-ի երկարամտայ

նախկին աշակերտ տղա՝ Էւր Թաւաթա՝ Պուրճ Համուտի Ս. Աստուածածին եկեղեցիի ծովսէն:

ՀԱԳ-ի նախկին աշակերտ ֆիլմարտադրող-բեմադրիչ ՊարէՏ Մարուսեա այժմ կը պատրաստէ վաւերագրական ժապաւէն մը Faces of Persecution, որ վերջին երեսուն տարիներու քրիստոնեաներու հալածանքը կը ցոյցանէ, ընդ որում Արցախի հայութեան:



Ճարտարապետ Յսոֆ Մեռաւեսի (1978-ի շրջ.) արուեստի գործերէն մին այժմ կը ցուցադրուի Փեքինի Արդի արուեստի թանգարանին մեջ: Գործը կը կոչուի The Colorful Urumqi Cityscape (120 x 240 սմ), որ յատուկ ձեւով պատրաստուած է: Յիշեցնենք որ Սիլահեան Լոնտոնի 2012-ի Ողիմպիական խաղերուն կից ողիմպիական գեղարուեստից ոսկի շքանշանակիր է:

Երկարամտայ նախկին աշակերտուհի ԱՄՆ-ի Օրէյնճ Քաունթիի Գերագոյն ատենի դատարար Կատա Աբգարեան, 27 Սեպտեմբեր 2022-ին Էմիլիին Քրիչիոյի հետ հարցազրոյց ունեցաւ «թէ ինչ կրնայ ընել Հայաստանը, որպէսզի Ազրայէյնան համարատու ըլլայ իր գործած պատերազմական ոճիրներուն համար»: Հարցազրոյցը կազմակերպուած էր Civilnet-ի կողմէ: Իսկ 29 Հոկտեմբերին, «Հայաստան 2041» հարցազրոյցներու ծիրէն ներս, Արգարեանի հետ զրոյցած է տնտեսագիտութեան դոկտոր Վահա Զուռօեան (1968-ի շրջ.), ընդհանրապէս անոր գործունէութիւններուն մասին:

Լուս Անճելոյի Թէքէեան մշակութային միութեան ընկերային յանձնախումբի Պէշկէօթիւրեան կեդրոնին մեջ կազմակերպուած 26 Օգոստոս 2022-ի ընտանեկան երեկոյին բացման խօսքը կատարած է նախկին աշակերտ եւ ՀԱԳ-ի Արեւմտեան Ալիի գործերու յանձնակատար ԺԻՐԱՅԻ ՖՐՈՒՃԵԱՆ, իբր յանձնախումբի ատենապետ:

Մուսա Լեւան Հերոսամարտի 107-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 83-ամեակի տօնակատարութեան բանախօսն էր տիկին Մուգա Սողոմոսեան (1987-ի շրջ.): Ձեռնարկը կազմակերպուած էր ՀՅԴ Կարմիր Լեռ կոմիտէի դաստիարակչական յանձնախումբի կողմէ:



ԼՀԿ-ի Համագրային մշակութային ընկերակցության Լիբանանի շրջ. վարչության 2021-2022-ի 500,000 լ.ն.-ով սան որդեգրելու ծրագրին Լոս Անճելոսի ԼԱԲ-Բ երաժշտական կեդրոնի հիմնադիր-տնօրէն ՎԱՃԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ (1971-ի շրջ.) 40 սան որդեգրած է:



4 Յունիս 2022-ին Նիւ Զրրոզի Ռիճֆիլտ կեդրոնին մէջ նշուած են հայոց մայիսեան յաղթանակները, հանդիսավարութեամբ երկարամեայ նախկին աշակերտուհի, Արցախ ֆոնտի անդամ ՓՈԼԻՆ ՏՈՒԹՈՒՄԵԱՆԻ: Այդ օր հաւաքուած է աւելի քան 40,000 ամ. տղար:

Անթիլիասի մայրավանքի բակին մէջ տեղի ունեցած Ապրիլ 24-ի հսկումին, ՔՋ ընկերակցության կողմէ բացման խօսքը արտասանած է ՄԱՐԻՆԷ ՇԷՆԻՐԵԱՆ (2014-ի շրջ.):



ՀԲԸՄ-ի Լիբանանի պաշտօնաթերթ «Խօսնակ» ամսագրի խմբագրութեան նախաձեռնութեամբ պարգևատրուած են ՀԲԸՄ-ի վաստակաւոր ուսուցիչներ: Ինը պատուողներու մէջ եղած են բանասէր, հրապարակագիր ՊԱՐՈՅ ԱՂՊԱՇԵԱՆ (1964-ի շրջ.), Ուսողութեան նախկին ուսուցիչ ԱԼԵՔՍ ԱՃԵՄԵԱՆ (1969-ի շրջ.), եւ ՀԱԳ-ի գեղարուեստից այցելու ուսուցիչ ՎԱՋԳԷՆ ՄՈՒՂԱԼԵԱՆ:

Տիկ. ԱՆԱՇԻՏ ՊԱՂՏԻՎԵԱՆ-ՏՕՆԻՎԵԱՆ (1963-ի շրջ.) 9 Ապրիլ 2022-ի ՀԲԸՄ-ՇԵԸ-ի Անթիլիասի սկանուական ծնողաց վարչութեան կողմէ կազմակերպուած ձեռնարկի մը, ճաշատեսակներու, աղցաններու եւ կարկանդակի տեսակներու պատրաստութեան մասին խօսած է:

ՆՍՈՒՅԸ Նախորդ թիւին մէջ նշուած «Lessons Learned In Disaster Mental Health. The Earthquake in Armenia and Beyond» գիրքին ուսումնասիրութիւնը եւ գլխաւոր աշխատանքը կատարած է 1964-ի շրջանաւարտ հոգեբոյժ ՏՌԹ. ԱՐՄԷՆ ԿԵՕՆՃԵԱՆ:

ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- Երկարամեայ նախկին աշակերտուհի Կասիա Գարակէօզեան-Շապանեան, 24 Մայիս 2022-ին Պոսթընի մէջ ունեցած է մանչ զաւակ մը՝ Լիօ:


ՊՍԱԿ

- Երկարամեայ նախկին աշակերտուհի Փաթիլ Պեղճեան Տուպայի մէջ 13 Սեպտեմբեր 2022-ին եկեղեցական պատկով ամուսնացած է Լուրաս Հանի հետ:
- 2008-ի շրջանաւարտ Յարութ Արթինեան 11 Օգոստոս 2022-ին Հայաստանի մէջ պատկուած է օրիորդ Դալար Աթէշեանին հետ:

Մ Ա Հ



† 1964-ի շրջանաւարտ դեղագործ Յովհաննէս Մինոյեան (1944 – 2022) մահացած է 27 Հոկտեմբեր 2022-ին Մոնթրէալի մէջ:



† 1952-ի շրջանաւարտուհի տիկ. Սոնա Թիրօնճեան-Արէշեան (1934 – 2022) մահացած է 9 Հոկտեմբեր 2022-ին Լոս Անճելոսի մէջ յետ երկարամեա հիւանդութեան:




† 1962-ի շրջանաւարտ, Տուպայի քարիղի ամերիկեան ընկերութեան նախկին տնօրէն, Լիբանանի կարգ մը ազգային կառոյցներու ճարտարապետական աշխատանքներու վերահսկիչ Յարութին-Հենրի Միսիկեան (1942 – 2022) մահացած է Պէյրութի մէջ 19 Հոկտեմբեր 2022-ին:



† 1954-ի շրջանաւարտ երաժշտագէտ-հեղինակ Պեպրոս Ալահայրյեան (1934 – 2022) մահացած է Լոս Անճելոսի մէջ 11 Սեպտեմբեր 2022-ին:

† 1969 – 1973-ի նախկին աշակերտ Բենիամին Արւլանեան (1955-2022) մահացած է Պէյրութի մէջ 6 Սեպտեմբեր 2022-ին յետ անողորմ հիւանդութեան:



† 1967-ի շրջանաւարտ առեւտրական Միրօ Ունճեան (1947 – 2022) մահացած է Ֆրանսայի Կրաս քաղաքին մէջ 3 Սեպտեմբեր 2022-ին յետ անողորմ հիւանդութեան:



† 1955- 1958-ի նախկին աշակերտ, արեւին յաջող պատերապողիսթ Արա Խրչրեան (1944 – 2022) մահացած է Երեւանի մէջ, 2021 Օգոստոսին:

† 1973 – 1976-ի մանկապարտէզի նախկին ուսուցչուհի օրդ. Անահիտ Ութայեան (1942 – 2022) մահացած է Պէյրութի մէջ 6 Նոյեմբեր 2022-ին:

ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ԼԻԲԱՆԱՆ

25 Նոյեմբեր 2022, եր. ժ. 8
ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՀԱԲԱՔ
 Եկեղեցիի դահլիճ

5 Փետրուար 2022, եր. ժ. 7
ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՍՈՒԼՔ
 Հայ աւետ. առաջին եկեղեցի

10 Յունիս 2023
ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ
 (ծրագրումի փուլի մէջ)

11 Յունիս 2023
ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԵՐԳ
 Հայ աւետ. առաջին եկեղեցի

Յունիս 2023
ԴՈԿՏ. ՉԱԲԵՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ ՅՈՒՇԵՐՈՒ ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ
 Հոկտեմբեր 2023
ՀԱԳ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԱՍՆ

Հոկտեմբեր 2023
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
 հայ կրթութեան նիւթով

ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՀԱԳ ԱՍՆ ԱՐԵՒՏՏ. ԱՓԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբեր 2023
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԵՐՈՒ ՀԱՍՆԽՄԲՈՒՄԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀԱԳ-Ի «ՈՎ ՈՎ Է» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւէն ի վեր շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:

	ԱՄ. ՏՈՒՐ
LEBANESE LADIES CULTURAL SOCIETY Կրթանպաստ 16 աշակերտներու	6200
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍՆՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԱՄ Անձնակազմի վճարումներու մասնակցութիւն	4622
ԴՊՐՈՑԱՇԵՔԻ ՆՈՐԳՈՒԹԻՒՆ Ծնողք Պր. Թոնի Սամահա Գանատայի հայ աւետարանչական ընկերակցութիւն	2000 1000
AMAA-Ի ՄԻՋՈՍԱՐ Տիկ. Անայիս Պարսումեան Պր. Յարութ Արթըր Մետրոպեան Տիկ. Նայիրի Մարգարեան-Պուլպուսիս	500 250 100
ԴՊՐՈՑԻ ԶԱՖԻԹԵՐԻԱՅԻՆ ՆՈՒԲԵՐ Lebanon Baptist Church Trust	400
ԸՆԴՊՈՒՅՔԵԼՈՎ ՊԱՏՈՒԿԱԿԱՆ ՏԵՐԵՆԻ ԿՈՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ BONUS-Ի ՖՈՆՏԻՆ Տէր ԵԼ տիկ. Յովիկ ԵԼ Սիլվա Ներսէսեան (Աթէնք)	1000
ԴՊՐՈՑԻ ՉԱԲԵՆ ՄՍԸՐԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ Պր. Փոլ Զարլոզեան (ԱՄՆ) Պր. Վահէ Գումրոյեան (Անգլիա) Պր. Համբիկ Գեորգեան (Անգլիա)	1200 250 100
ՏԱՐԵԿԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՄ Պր. Սարգիս Սիմիթեան (Լիբանան)	1000 (չէք)
ՄԻՔԻՆ (ՄԻՐՈ) ՈՒՔՇԵԱՆԻ ՄԱՀՈՒՄԱՆ ՏԵՈՒՐ ԱՌԻԹՈՎ Տէր ԵԼ Տիկ. Ատոմ Թնճուկեան (փոխան ծաղկեպսակի) Քոյրը՝ Տիկ. Սիլվա Թաթարեան	200 50
ՈՐԲ. ՆԵՆՍԻ Դ. ՈՍԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ Խանամիրեան ԵԼ Ոսկեան ընտանիքներ	300
ԴՊՐՈՑԻ ԼՐԱՏՈՒ-ԻՆ Համբիկ Թաթուլեան (Գանատա) Պր. Նարեկ Տէրտերեան (ԱՄՆ) Տիկ. Նորա Պարութեան-Ճղալեան (Ֆրանսա) Տիկ. Անահիտ Արթիսեան-Ժամկոչեան (Ս. Արաբիա)	50 Գան. տ. 100 100 40
ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՍԿԻ	
LOՒ Վրթանպաստ 2021-22ի	1.500.000
ԱՆԱՀԻՏ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ Մի ոմն Մի ոմն Մի ոմն	500.000 300.000 300.000

ԿՐԹԱԿԱՆ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիւին մէջ նշուած **ՓԻԼԻՊՈՍԵԱՆ ՖՈՆՏԻ** յատկացումը պէտք է ըլլայ 8400 տոլար, իսկ **ՏՈՔԹ. ՀՐԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ, ՏՈՔԹ. ՀՐԱՐ ԿԻԼԵՍԵՐԵԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ ՊԵՏՈՅԵԱՆԻ, ՌՈՊԵՐ ՄԵՆՇԵԱՆԻ, ԱՐԹԵՐ ՍԱԼՊԵԱՆԻ ԵՆ ԳՐԻԳՈՐ ՄՐՏԱՊԵՇԸՔԵԱՆԻ** նուիրատուութիւնները **ՈՐԲ. ՏՈՔԹ. Մ. ՊԱՆՊՈՍԵԱՆԻ** յիշատակին էին:

Կը հայցենք նուիրատու կազմակերպութեան եւ անհատներուն ներողամտութիւնը:

Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ԴՈԿՏ. ԱՐԱՆ ԻՐԱԵՇԼԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՐ ՆԵՐՍԵ ՊԱՐՏՈՅԵԱՆ
 ՏԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՊՐՔԵԱՆ
 Էջաղորում՝ ԱՆ ԲԵՏԵՆԵԱՆ ՊԱՍԵՐ
 Ս.Ա.Յ.Ա.Ե. Միութեան Հոստոսիոսեան Գրասենեակ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College